# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 13

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

ՆԻՍՏՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ Է աշխատակազմի քարտուղար Արա Սուքիասյանը:

ՆԻՍՏԸ ՎԱՐՈՒՄ Է Արթիկ համայնքի ղեկավար՝ Անանիկ Ոսկանյանը:

Նիստին ներկա էին ավագանու 17 /տասնյոթ/ անդամներ, բացակայում էին ավագանու 10 /տասը/ անդամներ:

Նիստին մասնակցում են Արթիկ համայնքի ավագանու 17 /տասնյոթ/ անդամներ ՝ Անանիկ Ոսկանյանը, Արմինե Աղրամանյանը, Տիգրան Բաղդասարյանը, Էմիլ Գևորգյանը, Վարդուհի Հովհաննիսյանը, Մանուկ Գևորգյանը, Աստղիկ Պետրոսյանը, Արտյոմ Չարչյանը, Արտակ Հարությունյանը, Արման Տոնոյանը, Նարինա Վարդանյանը, Հովհաննես Սահակյանը, Գայանե Մինասյանը, Ոսկան Վարդանյանը, Մուշեղ Մկրտչյանը, Մեսրոպ Վարագյանը, Ժաննա Ասատրյանը:

Նիստին ներկա էին համայնքի ղեկավարի տեղակալներ Վարդան Մակեյանը և Արման Աջամօղլյանը, աշխատակազմի քարտուղար Արա Սուքիասյանը, համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար Սևակ Պետոյանը, ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Էմմա Յայլոյանը, աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Արկադի Թադևոսյանը և այլ աշխատակիցներ:

Նիստի օրակարգ ներկայացնելուց հետո հետևյալ օրակարգը դրվեց քվեարկության և հաստատվեց:

## ՕՐԱԿԱՐԳ

**Հաստատել նիստի հետևյալ օրակարգը**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 235-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

   **/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/**

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին:

**/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/**

3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2023 թվականի բյուջեի սոցիալական հատուկ արտոնություններ բաժնի /այլ դասերին չպատկանող/ բաժնում նախատեսված գումարից հատկացումներ կատարելու մասին:

   **/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/**

4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ հաճախող երեխաների վարձավճարների զեղչման մասին:

   **/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/**

5. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 229-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին:

   **/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/**

6. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Լեռնակերտ բնակավայրի 0,19614 հեկտար մակերեսով հողամասը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Լեռնակերտի նախադպրոցական ուսումնական հիմնարկին հատկացնելու մասին:

   **/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/**

7. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասում քաղաքացի Սվետլանա Մեսրոպի Բզնունու կողմից ինքնակամ կառուցված հասարակական նպատակային նշանակության շինությունը և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 08-002-0042-0101 կադաստրային ծածկագրով 0,00061հեկտար մակերեսով հողամասը գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով կառուցապատողին օտարելու մասին:

   **/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/**

8. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերից 3,75614 հա մակերեսով 08-113-0311-0001 կադաստրային ծածկագրով վարելահողը մրցույթով՝ հրապարակային սակարկությունների միջոցով, վարձակալությամբ տրամադրելու և հողամասի վարձավճարի մեկնարկային գին սահմանելու մասին:

**/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/**

9. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասում քաղաքացի Արծվիկ Գևորգի Մխիթարյանի կողմից ինքնակամ կառուցված բնակավայրերի նպատակային նշանակության շենք-շինությունը և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-002-0080-0034 կադաստրային ծակագրով 0,02213հեկտար մակերեսով հողամասը գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով կառուցապատողին օտարելու մասին:

**/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/**

10. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2023 թվականի հերթական նիստի օր նշանակելու մասին:

**/զեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյան/**

**Ավագանու անդամներ՝**

| **Կողմ (17)** | **Դեմ (0)** | **Ձեռնպահ (0)** |
|---|---|---|
| Ոսկանյան Անանիկ | | |
| Աղրամանյան Արմինե | | |
| Բաղդասարյան Տիգրան | | |
| Գևորգյան Էմիլ | | |
| Հովհաննիսյան Վարդուհի | | |
| Գևորգյան Մանուկ | | |
| Պետրոսյան Աստղիկ | | |
| Զարդյան Արտյոմ | | |
| Հարությունյան Արտակ | | |

Տոնոյան Արման

Վարդանյան Նարինա

Սահակյան Հովհաննես

Մինասյան Գայանե

Վարդանյան Ոսկան

Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ

Ասատրյան Ժաննա

Օրակարգի 1-ին և 2-րդ հարցերը ներկայացրեց համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Էմմա Յայլոյանը: Առաջին հարցի կապակցությամբ նա ներկայացրեց որոշման նախագիծ՝ ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 235-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: Պատասխանելով ավագանու անդամների հարցերին՝ զեկուցողը նշեց համայնքի 2023 թվականի բյուջեի ինչպես եկամտային մասի, այնպես էլ ծախսային մասի այն փոփոխությունները, որոնք անհրաժեշտ է կատարել սուբվենցիոն ծրագրերի առաջացած փոփոխությունների, համայնքային փողոցների լուսավորության հետ կապված ֆինանսական հարցերի, Արթիկ համայքնի բնակավայրերի գազատարի ներքին ցանցի ընդլայնման և այլ հարցերի կապակցությամբ: Քննարկումից հետո հարցը դրվեց քվեարկության և ընդունվեց՝ 17 կողմ, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 ձայներով:

**Ավագանու անդամներ՝**

| **Կողմ (17)** | **Դեմ (0)** | **Ձեռնպահ (0)** |
|---|---|---|
| Ոսկանյան Անահիտ | | |
| Աղրամանյան Արմինե | | |
| Բաղդասարյան Տիգրան | | |
| Գևորգյան Էմիլ | | |
| Հովհաննիսյան Վարդուհի | | |
| Գևորգյան Մանուկ | | |
| Պետրոսյան Աստղիկ | | |
| Չարչյան Արտյոմ | | |
| Հարությունյան Արտակ | | |
| Տոնոյան Արման | | |
| Վարդանյան Նարինա | | |
| Սահակյան Հովհաննես | | |

Մինասյան Գայանե

Վարդանյան Ոսկան

Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ

Ասատրյան Ժաննա

Օրակարգի 2-րդ հարցի կապակցությամբ Էմմա Յայլոյանը ներկայացրեց որոշման նախագիծ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2024-2026 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին՝ ըստ հավելվածի: Զեկուցողի ներկայացմամբ մինչև համայնքային բյուջեի հաստատումն անհրաժեշտ է հաստատել միջնաժամկետ ծախսերի ծրագիրը 2024-2026 թվականների համար, որից հետո նա ներկայացրեց միջնաժամկետ ծրագրի թվերը: Քննարկումից հետո ներկայացված որոշման նախագիծը դրվեց քվեարկության և ընդունվեց՝ 17 կողմ, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 ձայներով:

**Ավագանու անդամներ՝**

| **Կողմ (17)** | **Դեմ (0)** | **Ձեռնպահ (0)** |
|---|---|---|
| Ոսկանյան Անանիկ | | |
| Աղրամանյան Արմինե | | |
| Բաղդասարյան Տիգրան | | |
| Գևորգյան Էմիլ | | |
| Հովհաննիսյան Վարդուհի | | |
| Գևորգյան Մանուկ | | |
| Պետրոսյան Աստղիկ | | |
| Չարչյան Արտյոմ | | |
| Հարությունյան Արտակ | | |
| Տոնոյան Արման | | |
| Վարդանյան Նարինե | | |
| Սահակյան Հովհաննես | | |
| Մինասյան Գայանե | | |
| Վարդանյան Ոսկան | | |
| Մկրտչյան Մուշեղ | | |
| Վարագյան Մեսրոպ | | |
| Ասատրյան Ժաննա | | |

Օրակարգի 3-րդ հարցը ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ – սոցիալական աշխատող Հերմինե Սահակյանը: Նա ներկայացրեց որոշման

նախագիծ ՝ ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2023 թվականի բյուջեի սոցիալական հատուկ արտոնություններ բաժնի /այլ դասերին չպատկանող / բաժնում նախատեսված գումարից հատկացումներ կատարելու մասին: Զեկուցողը ներկայացրեց Արթիկ համայնքի սոցիալապես անապահով այն 14 ընտանիքների ցուցակը, որոնց կատարված ուսումնասիրությունների արդյունքում հատկացվել են համապատասխան գումարներ: Ընդհանուր առմամբ առաջարկվում է հատկացնել 345.000 (երեք հարյուր քառասունհինգ հազար) ՀՀ դրամ: Քննարկումից հետո հարցը դրվեց քվեարկության և ընդունվեց՝ 17 կողմ, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 ձայներով:

**Ավագանու անդամներ՝**

| **Կողմ (17)** | **Դեմ (0)** | **Ձեռնպահ (0)** |
|---|---|---|
| Ոսկանյան Անանիկ | | |
| Աղրամանյան Արմինե | | |
| Բաղդասարյան Տիգրան | | |
| Գևորգյան Էմիլ | | |
| Հովհաննիսյան Վարդուհի | | |
| Գևորգյան Մանուկ | | |
| Պետրոսյան Աստղիկ | | |
| Զարչյան Արտյոմ | | |
| Հարությունյան Արտակ | | |
| Տոնոյան Արման | | |
| Վարդանյան Նարինե | | |
| Սահակյան Հովհաննես | | |
| Մինասյան Գայանե | | |
| Վարդանյան Ոսկան | | |
| Մկրտչյան Մուշեղ | | |
| Վարագյան Մեսրոպ | | |
| Ասատրյան Ժաննա | | |

Օրակարգի 4-րդ հարցը ներկայացրեց համայնքապետարանի կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Մարինե Թադևոսյանը: Նա ներկայացրեց որոշման նախագիծ՝ ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ՀՈԱԿ-ներ հաճախող երեխաների վարձավճարների զեղչման մասին: Մ.Թադևոսյանի պարզաբանմամբ Արթիկ համայնքի ավագանու 2023 թվականի օգոստոսի 11-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքում տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնություն կիրառելու

կարգը հաստատելու մասին>> N 115-Ն որոշման հիման վրա ներկայացվում է Արթիկ համայնքի մի շարք ՀՈԱԿ-ներ հաճախող 8 երեխաների վարձավճարները զեղչման մասին որոշման նախագիծը և այդ երեխաների ցուցակը: Նշված նախագիծը դրվեց քվեարկության և ընդունվեց՝ 17 կողմ, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0 ձայներով:

**Ավագանու անդամներ՝**

| **Կողմ (17)** | **Դեմ (0)** | **Ձեռնպահ (0)** |
|---|---|---|
| Ոսկանյան Անանիկ | | |
| Աղրամանյան Արմինե | | |
| Բաղդասարյան Տիգրան | | |
| Գևորգյան Էմիլ | | |
| Հովհաննիսյան Վարդուհի | | |
| Գևորգյան Մանուկ | | |
| Պետրոսյան Աստղիկ | | |
| Չարչյան Արտյոմ | | |
| Հարությունյան Արտակ | | |
| Տոնոյան Արման | | |
| Վարդանյան Նարինա | | |
| Սահակյան Հովհաննես | | |
| Մինասյան Գայանե | | |
| Վարդանյան Ոսկան | | |
| Մկրտչյան Մուշեղ | | |
| Վարագյան Մեսրոպ | | |
| Ասատրյան Ժաննա | | |

Օրակարգի 5-րդ հարցը նույնպես ներկայացրեց կրթության, մշակույթի, սպորտի երիտասարդության հարցերի բաժնի պետ Մարինե Թադևոսյանը: Նա ներկայացրեց որոշման նախագիծ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 229-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին: Մ.Թադևոսյանը պարզաբանում ներկայացրեց այն մասին, որ հաշվի առնելով Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված մեր հայրենակիցների մեծ թվաքանակը և նրանց սոցիալական վիճակը, անհրաժեշտ է նախկինում ընդունված ավագանու որոշման մեջ կատարել համապատասխան փոփոխություն հետևյալ բովանդակությամբ՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 229-Ա որոշման 1-ին կետի, 1-ին ենթակետի գ. պարբերությունից հետո ավելացնել դ. պարբերություն՝ հետևյալ բովանդակությամբ.

<<դ. սեպտեմբերի 19-ից Ադրբեջանի կողմից Արցախի դեմ սանձազերծված ռազմական գործողությունների հետևանքով բռնի տեղահանված արցախցի երեխաները>>: Նշված որոշման նախագիծը դրվեց քվեարկության և հաստատվեց՝ 17 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայներով:

**Ավագանու անդամներ՝**

**Կողմ (17)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ոսկանյան Անանիկ
Աղրամանյան Արմինե
Բաղդասարյան Տիգրան
Գևորգյան Էմիլ
Հովհաննիսյան Վարդուհի
Գևորգյան Մանուկ
Պետրոսյան Աստղիկ
Չարչյան Արտյոմ
Հարությունյան Արտակ
Տոնոյան Արման
Վարդանյան Նարինա
Սահակյան Հովհաննես
Մինասյան Գայանե
Վարդանյան Ոսկան
Մկրտչյան Մուշեղ
Վարագյան Մեսրոպ
Ասատրյան Ժաննա

Օրակարգի 6-րդ հարցը ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Արկադի Գրիգորյանը: Նա ներկայացրեց որոշման նախագիծ՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Լեռնակերտ բնակավայրի 0,19614 հեկտար մակերեսով հողամասը Հայաստանի Հանրապետության Շիրակի Մարզի Արթիկ համայնքի Լեռնակերտի նախադպրոցական ուսումնական հիմնարկին հատկացնելու մասին: Հարցը ներկայացնողը բացատրություն տվեց այն մասին, որ նշված որոշման նախագիծը

ներկայացվում է Լեռնակերտի նախակրթարանի փաստաթղթերի ձևակերպման նպատակով, ուստի առաջարկվում է հետևյալ որոշման նախագիծը՝

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Լեռնակերտ բնակավայրի 0,19614 հեկտար մակերեսով հողամասը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Լեռնակերտի նախադպրոցական ուսումնական հիմնարկին հատկացնելու վերաբերյալ:

Քննարկումից հետո նշված որոշման նախագիծը դրվեց քվեարկության և հաստատվեց 17 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայներով:

**Ավագանու անդամներ՝**

| **Կողմ (17)** | **Դեմ (0)** | **Ձեռնպահ (0)** |
|---|---|---|
| Ոսկանյան Անանիկ | | |
| Աղրամանյան Արմինե | | |
| Բաղդասարյան Տիգրան | | |
| Գևորգյան Էմիլ | | |
| Հովհաննիսյան Վարդուհի | | |
| Գևորգյան Մանուկ | | |
| Պետրոսյան Աստղիկ | | |
| Չարչյան Արտյոմ | | |
| Հարությունյան Արտակ | | |
| Տոնոյան Արման | | |
| Վարդանյան Նարինե | | |
| Սահակյան Հովհաննես | | |
| Մինասյան Գայանե | | |
| Վարդանյան Ոսկան | | |
| Մկրտչյան Մուշեղ | | |
| Վարագյան Մեսրոպ | | |
| Ասատրյան Ժաննա | | |

Օրակարգի 7-րդ հարցը ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Արկադի Գրիգորյանը: Նա ներկայացրեց հետևյալ որոշման նախագիծը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասում քաղաքացի Սվետլանա Մեսրոպի Բզնունու կողմից ինքնակամ կառուցված հասարակական նպատակային նշանակության շինությունը եվ նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված հայաստանի հանրապետության Շիրակի մարզի

Արթիկ համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 08-002-0042-0101 կադաստրային ծածկագրով 0,00061 հեկտար մակերեսով հողամասը գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով կառուցապատողին օտարելու մասին: Հարցը ներկայացնողը բացատրություն տվեց այն մասին, որ խոսքը վերաբերվում է շենքի ճակատային մասին հակադիր հատվածում գտնվող կառույցի պատի 6,1 քառակուսի մետր չափով հատվածի ուղղման մասին: Քննարկումից հետո նշված որոշման նախագիծը դրվեց քվեարկության և հաստատվեց 17 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայներով:

**Ավագանու անդամներ՝**

| **Կողմ (17)** | **Դեմ (0)** | **Ձեռնպահ (0)** |
|---|---|---|
| Ոսկանյան Անանիկ | | |
| Աղրամանյան Արմինե | | |
| Բաղդասարյան Տիգրան | | |
| Գևորգյան Էմիլ | | |
| Հովհաննիսյան Վարդուհի | | |
| Գևորգյան Մանուկ | | |
| Պետրոսյան Աստղիկ | | |
| Զարչյան Արտյոմ | | |
| Հարությունյան Արտակ | | |
| Տոնոյան Արման | | |
| Վարդանյան Նարինա | | |
| Սահակյան Հովհաննես | | |
| Մինասյան Գայանե | | |
| Վարդանյան Ոսկան | | |
| Մկրտչյան Մուշեղ | | |
| Վարազյան Մեսրոպ | | |
| Ասատրյան Ժաննա | | |

Օրակարգի 8-րդ հարցը նույնպես ներկայացրեց աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Արկադի Գրիգորյանը, առաջարկելով հետևյալ նախագիծը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նպատակային նշանակության հողերից 3,75614 հա մակերեսով 08-113-0311-0001 կադաստրային ծածկագրով վարելահողը մրցույթով՝ հրապարակային սակարկությունների միջոցով, վարձակալությամբ տրամադրելու և

հողամասի վարձավճարի մեկնարկային գին սահմանելու մասին: Քննարկման արդյունքում առաջարկվեց որոշման հետևյալ նախագիծը՝

1.Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի Փանիկ գյուղում գտնվող, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականություն հանդիսացող, 2017 թվականի սեպտեմբերի 1-ի անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 03102023-08-0059 վկայականով փաստագրված 3,75614հա մակերեսով, գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության հողատարածքը մրցույթով՝ հրապարակային սակարկությունների միջոցով 25 տարի ժամկետով, գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվելու նպատակով վարձակա-
լությամբ տրամադրելու առաջարկությանը:

2.Հողամասի վարձակալության վճարի մեկնարկային վարձավճարի գին սահմանել՝ 1հա-ի համար 22740 (քսաներկու հազար յոթ հարյուր քառասուն) Հայաստանի Հանրապետության դրամ: Նախագիծը դրվեց քվեարկության և ընդունվեց 17 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայներով:

**Ավագանու անդամներ՝**

| **Կողմ (17)** | **Դեմ (0)** | **Ձեռնպահ (0)** |
|---|---|---|
| Ոսկանյան Անանիկ | | |
| Աղրամանյան Արմինե | | |
| Բաղդասարյան Տիգրան | | |
| Գևորգյան Էմիլ | | |
| Հովհաննիսյան Վարդուհի | | |
| Գևորգյան Մանուկ | | |
| Պետրոսյան Աստղիկ | | |
| Չարչյան Արտյոմ | | |
| Հարությունյան Արտակ | | |
| Տոնոյան Արման | | |
| Վարդանյան Նարինե | | |
| Սահակյան Հովհաննես | | |
| Մինասյան Գայանե | | |
| Վարդանյան Ոսկան | | |
| Մկրտչյան Մուշեղ | | |
| Վարագյան Մեսրոպ | | |
| Ասատրյան Ժաննա | | |

Օրակարգի 9-րդ հարցի կապկցությամբ Արկադի Գրիգորյանը ներկայացրեց հետևյալ որոշման նախագիծը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասում քաղաքացի Արծվիկ Գևորգի Մխիթարյանի կողմից ինքնակամ կառուցված բնակավայրերի նպատակային նշանակության շենք-շինությունը եվ նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-002-0080-0034 կադաստրային ծակագրով 0,02213 հեկտար մակերեսով հողամասը գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով կառուցապատողին օտարելու մասին:

Քննարկումից հետո առաջարկվեց որոշման հետևյալ նախգիծը՝

1.Համայնքի ղեկավարի առաջարկությամբ, տալ համաձայնություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օրինական ճանաչված և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականությունը համարված 183,43քմ արտաքին մակերեսով, 152,42քմ ներքին մակերեսով բնակելի նշանակության ավտոտնակի և 33,52քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 23,89քմ) կիսանկուղի, շենք-շինությունների պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի սեփականությունը հանդիսացող, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0,02213 հեկտար մակերեսով հողամասը՝ անշարժ գույքի հասցեն՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ Արթիկ համայնք քաղաք Արթիկ Գ.Նարեկացու փողոց 20/2 ավտոտնակ, գնման նախապատվության իրավունքով օտարել կառույցն իրականացրած անձ Արծվիկ Գևորգի Մխիթարյանին:

2.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացու հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր: Որոշման նախագիծը դրվեց քվեարկության և ընդունվեց՝ 17 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

**Ավագանու անդամներ՝**

**Կողմ (17)** **Դեմ (0)** **Ձեռնպահ (0)**

Ոսկանյան Անանիկ

Աղրամանյան Արմինե

Բաղդասարյան Տիգրան

Գևորգյան Էմիլ

Հովհաննիսյան Վարդուհի

Գևորգյան Մանուկ

Պետրոսյան Աստղիկ

Չարչյան Արտյոմ

Հարությունյան Արտակ

Տոնոյան Արման

Վարդանյան Նարինա

Սահակյան Հովհաննես

Մինասյան Գայանե

Վարդանյան Ոսկան

Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ

Ասատրյան Ժաննա

Օրակարգի վերջին՝ 10-րդ հարցի վերաբերյալ Արթիկ համայնքի ղեկավար Անանիկ Ոսկանյանը ներկայացրեց որոշման նախագիծ՝

ՀՀ Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2023 թվականի հերթական նիստի օր նշանակել 2023 թվականի նոյեմբերի 21-ին՝ 15.00-ին: Նախագիծը դրվեց քվեարկության և ընդունվեց՝ 17 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

**Ավագանու անդամներ՝**

| **Կողմ (17)** | **Դեմ (0)** | **Ձեռնպահ (0)** |
|---|---|---|
| Ոսկանյան Անանիկ | | |
| Աղրամանյան Արմինե | | |
| Բաղդասարյան Տիգրան | | |
| Գևորգյան Էմիլ | | |
| Հովհաննիսյան Վարդուհի | | |
| Գևորգյան Մանուկ | | |
| Պետրոսյան Աստղիկ | | |
| Չարչյան Արտյոմ | | |
| Հարությունյան Արտակ | | |
| Տոնոյան Արման | | |
| Վարդանյան Նարինա | | |
| Սահակյան Հովհաննես | | |
| Մինասյան Գայանե | | |

Վարդանյան Ոսկան

Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ

Ասատրյան Ժաննա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՈՍԿԱՆՅԱՆ

Արթիկ համայնքի ղեկավար

20 հոկտեմբերի 2023 թվական